«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Երաժշտադիդակտիկ խաղերը որպես երեխայի ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց»

Դաստիարակ՝ Անահիտ Տեր-Հովսեփյան

Մանկապարտեզ՝ Վայոց ձորի մարզ Արենի համայնք Աղավնաձոր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1. ԵՐԱԺՇՏԱԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ 4
1.1. Երաժշտության դերը երեխայի կյանքում 4
1.2. Նախադպրոցականի մոտ ստեղծագործական կարողունակությունների զարգացումը երաժշտադիդակտիկ խաղերի միջոցով 6
ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ 9
2.1. Պարապմունքի պլան 9
2.2. Հետազոտության ընթացք 11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Երաժշտությունը ոգեշնչում է ողջ աշխարհին, հոգին թևերով կահավորում, նպաստում է երևակայության թռիչքին. երաժշտությունը կյանք ու զվարճություն է հաղորդում այն ամենին, ինչ կա, երջանկացնում է մարդուն... Այն կարելի է անվանել ամեն գեղեցիկի և ամեն վեհի մարմնացում:»:

Պլատոն

Երաժշտությունը երեխայի բազմակողմանի զարգացման հզոր միջոց է, հոգևոր աշխարհի ձևավորումը: Այն ընդարձակում է նրա մտահորիզոնը, ծանոթացնում է տարատեսակ երևույթներին, հարստացնում է զգացմունքներով, առաջացնում է ուրախ հույզեր, նպաստում է ճիշտ հարաբերությունների ձևավորմանը հետ: Երաժշտությամբ հետաքրքրվելը երեխաների մոտ ակտիվացնում է ընկալումը, մտածողությունն ու խոսքը, դաստիարակում է բարձր գեղագիտական ճաշակ, զարգացնում է երաժշտական ունակությունները, երևակայությունը, ստեղծագործական միտքը, բազմակողմանիորեն ազդում է նրա զարգացման վրա: Երաժշտական խաղերը երեխաների երաժշտական ընկալունակության զարգացման կարևոր միջոցներից են: Երեխաները, երաժշտության ուղեկցությամբ կատարելով տարբեր շարժումներ և խաղային գործողություններ, առավելապես են զգում երաժշտական ստեղծագործության բնույթը, բովանդակությունը և կառուցվածքը:

Հետազոտության նպատակը: **Հետազոտական աշխատանքի նպատակն է գործնական պարապմունքների շնորհիվ՝ բացահայտել երաժշտադիդակտիկ խաղերի ազդեցությունը նախադպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման մեջ:**

Աշխատանքի կառուցվածքը: **Սույն հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, 1 տեսական և 1 գործնական գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:**

ԳԼՈՒԽ 1. ԵՐԱԺՇՏԱԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

1.1. Երաժշտության դերը երեխայի կյանքում

Երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման և դրանց վրա երաժշտադիդակտիկ խաղերի ունեցած ազդեցության վերաբերյալ քննարկումները մշտապես եղել է մանկավարժների և հոգեբանների ուշադրության կենտրոնում (Լ.Ն. Կոմիսարովա, Է. Պ. Կոստինա, Օ.Պ. Ռադինովա և այլոք): Մանկավարժները և հոգեբանները ստեղծագործելը դիտարկում են որպես անձի զարգացման կարևորագույն մեխանիզմ: Քանի որ նախադպրոցական տարիները երեխայի անձի ստեղծագործական կարողունակությունների և մի շարք այլ կարողունակությունների զարգացման տարիներ են, ապա դաստիարակի գլխավոր խնդիրը սաների ստեղծագործ անհատականության ձևավորման համար պայմաններ ապահովելն է: Հայտնի է, որ ստեղծագործումը ձևավորվում է գործունեության մեջ: Հարց է առաջանում, թե ինչպե՞ս կառուցել սաների ուսումնական գործունեությունը, որպեսզի առավելագույնս բացահայտվեն նրանց ստեղծագործական ընդունակությունները: Այստեղ դաստիարակին գալիս են օգնության երաժշտությունը և խաղերը:

Երաժշտությունը մշտապես օգտագործվել է երեխաներին հանգստացնելու, սփոփելու, զբաղեցնելու և կրթելու համար: Երեխաների կյանքում խոսքը, շարժումը, խաղը և երգը միասնական են: Համարվում է, որ երեխայի բնական խոսքն ու շարժումները պետք է դառնան երաժշտական փորձառության խթաններ, և որ երեխաները պետք է երաժշտության ստեղծման գործում մասնակիցներ դառնան: Ինչպես նշում է Ա. Շահնազարյանը՝ *«Պարը, խաղը, ասմունքը, երգն ու մարզանքը պետք է դիտել որպես երգ-երաժշտության դասավանդման համազոր և հավասար միավորներ»*:

Երեխայի կյանքում երաժշտությունը սկսվում է դեռևս օրորոցում, մոր ձայնը երեխայի համար ամենագեղեցիկն է, երգեցիկն է, նուրբն ու բարին է: Մոր կատարմամբ երեխան կարող է լսել տարբեր հնչողության «ռուրիներ»: Նախակրթարանի սաները

սովոր են քնելուց լսել օրորոցայիններ (« Արի՛, իմ սոխակ», Բ. Կանաչյանի «Օրոր»-ը)…: Երաժիշտ-դաստիարակի կենդանի կատարմամբ ջութակի, դաշնամուրի կամ այլ ազգային երաժշտական գործիքների նվագակցությամբ ունկնդրում են այն: Երաժշտության հետ շփումը երեխաների գեղագիտական դաստիարակության կարևոր միջոցներից մեկն է:

Երաժշտությունն ազդում է նրանց զգացմունքների, հույզերի, ձևավորում շրջապատող իրականության վերաբերյալ համապատասխան վերաբերմունք: Երեխաների խումբը կարող է համատեղ երգել կամ նվագակցել՝ մեծ հաճույք ստանալով այդ խմբային գործունեությունից: Հաճախ այն երեխաները, ովքեր դժկամությամբ են մասնակցում կամ ինքնարտահայտվում խմբային պարապմունքների ժամանակ, ավելի մեծ պատրաստակամությամբ են միանում երգին կամ պարին: Մանկական երգերից շատերը նախատեսում են զուգորդող շարժումների կատարում: Այս երգերը, որոնց ընթացքում երեխաները միաժամանակ կատարում են միևնույն շարժումները, հատկապես արդյունավետ են այլ հանգամանքներում պասիվություն դրսևորող երեխաներին աշխուժացնելու և ներգրավելու իմաստով:

1.2. Նախադպրոցականի մոտ ստեղծագործական կարողունակությունների զարգացումը երաժշտադիդակտիկ խաղերի միջոցով

Խաղը լայն հնարավորություններ է ընձեռում՝ երեխաների հետաքրքրությունների դրսևորման և ստեղծագործական մտածողության ակտիվացման առումով: Դրանց ձևավորումը սկսվում է դեռևս վաղ տարիքից: Մանկական ստեղծագործությունների միջոցով բացահայտվում են յուրաքանչյուր երեխայի ներաշխարհը, ընդունակությունները, պատկերացումները և հետաքրքրությունները: Խիստ կարևոր է խաղի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը: Առանց դրա, թերևս, անհնար է երեխաների ուշադրությունը կենտրոնացնել առաջիկա գործունեության ուղղությամբ: Նախադպրոցականների մոտ առաջին հերթին պետք է դաստիարակել ինքնուրույնություն, օգտագործելով ծանոթ երգերը, պարել տարբեր պայմաններում (խաղի, զբոսանքի ժամանակ): Երաժշտաուսուցողական խաղերի ժամանակ զարգացնել երաժշտական լսողությունը, ռիթմի զգացողությունը:

Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ ստեղծագործական կարողունակությունների զարգացման կարևորագույն միջոցներից մեկը երաժշտական դիդակտիկ խաղերն են: Երաժշտադիդակտիկ խաղերը միշտ համարվել են նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման հիմնական մանկավարժական եղանակներից մեկը: Երաժշտադիդակտիկ խաղերը միշտ հետաքրքիր են երեխաների համար և միշտ ցանկություն են առաջացնում մասնակցել դրանց: Սա երաժշտական դաստիարակության համընդհանուր մեթոդ է, որը թույլ է տալիս երեխաների մեջ մատչելի ձևով հետաքրքրություն և սեր սերմանել երաժշտության նկատմամբ և նրանց տալ երաժշտական գրագիտության հիմքերը:

Երաժշտադիդակտիկ խաղերը երեխաների մոտ զարգացնում են ռիթմի զգացողություն, շարժումների համակարգում և ստեղծագործական ունակություններ: Երաժշտադիդակտիկ գործիքների և խաղերի կարևորությունն այն է, որ նրանք օգնում են երեխաներին մատչելի ձևով ծանոթացնել երաժշտության համեմատաբար բարդ

հասկացություններին՝ երաժշտական ժանր, երաժշտական ստեղծագործության ձևեր և այլն:

Երաժշտադիդակտիկ խաղերը պետք է լինեն պարզ և մատչելի, հետաքրքիր և գրավիչ: Միայն այս դեպքում են խթան հանդիսանում երեխաների մոտ երգելու, լսելու, խաղալու, պարելու ցանկությունները: Խաղի ընթացքում երեխաները ոչ միայն ձեռք են բերում հատուկ երաժշտական գիտելիքներ և կարողություններ, այլև զարգացնում են անհատականության անհրաժեշտ գծերը և պատասխանատվության զգացումը: Բոլոր խաղերը նպաստում են երեխաների մտավոր որակների ձևավորմանը՝ ուշադրություն, հիշողություն, ինտելեկտ, սովորեցնում են արագ գործել, զուսպ լինել և գնահատել սեփական հնարավորությունները:

Նշենք, որ երաժշտական խաղերը երեխաների երաժշտական ընկալունակության զարգացման կարևոր միջոցներից են: Երեխաները, երաժշտության ուղեկցությամբ կատարելով տարբեր շարժումներ և խաղային գործողություններ, ավելի լավ են զգում երաժշտական ստեղծագործության բնույթը, բովանդակությունը և կառուցվածքը:

Հայտնի է, որ եթե երաժշտական խաղը համապատասխանում է երեխաների տրամադրությանը և ցանկություններին, առաջացնում է ակտիվություն և հետաքրքրություն: Իսկ դա էլ իր հերթին նպաստում է ուսուցվող նյութի արագ ընկալմանն ու հետագա խորացմանը:

Երաժշտադիդակտիկ խաղերի անցկացումը հետապնդում է մի շարք նպատակները.

- զարգացնել երեխաների երաժշտական ունակությունները,
- զարգացնել ռիթմի, տեմբրի և լսողության զգացողություն,
- զարգացնել հետևելու և ընդօրինակելու կարողությունը,
- խրախուսել անկախ գործողությունները՝ օգտագործելով երաժշտության դասերին ձեռք բերված գիտելիքները:

Երաժշտադիդակտիկ խաղերը պետք է լինեն պարզ և մատչելի, հետաքրքիր, գրավիչ և գունեղ ձևավորված: Քանի որ երեխաների երաժշտական ընկալումը

ձևավորվում է տարբեր խաղաձևերով, ուստի երաժշտական աշխարհի հետ ծանոթության համար օգտագործվում են հետևյալ ձևերը՝

- **հեքիաթներ,**
- **ասիկներ,**
- **ճվիկներ,**
- **օրորոցայիններ,**
- **երաժշտական- ռիթմիկ խաղեր:**

Դեռ վաղ տարիքից հարկավոր է երեխայի հետ ստեղծագործական գործունեություն ծավալել հեքիաթների, նկարագրական տեսարանների, բանաստեղծությունների իմպրովիզացիայի միջոցով: Տարբեր խաղեր կատարվում են տարբեր բնույթի երաժշտական ստեղծագործությունների ուղեկցությամբ: Դա երեխաներին հնարավորություն է տալիս ծանոթանալու տարբեր ժանրերի ու բնույթի երաժշտական ստեղծագործությունների հետ: Հատկապես ավագ խմբերում անց են կացվում այնպիսի խաղեր, որոնք երեխային տրամադրում են համբերությամբ լսել և տարբերել հակադիր բնույթի երաժշտական ստեղծագործություններ:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

2.1. Պարապմունքի պլան

«Երաժշտադիդակտիկ խաղերը որպես երեխայի ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց» թեմայի հետազոտական մասի իրականացման նպատակով կազմվել է պարապմունքի պլան: Իրականացվել է «Պապն ու շաղգամը» թեմայի ուսուցումը:

Աղյուսակ 1. Պարապմունքի պլան

Պարապմունք	Խումբ	Թեմա	Տևողություն
Ունկնդրում, խաղ-զվարճալիք	Ավագ	«Պապն ու շաղգամը»	25-30 րոպե
Նպատակ	Երաժշտադիդակտիկ խաղերի միջոցով զարգացնել երեխաների ստեղծագործական կարողունակությունները, ինչպես նաև ձևավորել հետաքրքրություն երաժշտության նկատմամբ: Երեխաների մեջ ձևավորել համախմբվածության, իրար օգնելու և սիրելու զգացմունքներ:		
Թեմային վերաբերող նյութերի հավաքում	Երաժշտադիդակտիկ խաղերի մշակում, անհրաժեշտ նյութերի նախապատրաստում: Թեմային վերաբերվող գրականության ուսումնասիրություն:		
Մեթոդներ	Խմբային աշխատանքներ		
Ընթացքը			
Խթանման փուլ	Երեխաները նստում են կիսաշրջան աթոռակներին, նրանց դիմաց նստում է դաստիարակը, կարդում է «Պապն ու շաղգամը» հեքիաթը, այնուհետև բեմականացնում այն:		
Իմաստի ընկալման փուլ	Անդրադարձ հեքիաթի համապատասխան հատվածներին՝ ցուցադրելով պատկերազարդ նկարներ և հեքիաթի համար նախատեսված խաղալիքներ:		

Լսողական ուշադրությունը զարգացնող խաղ՝ «Հավաքիր բերքը»	Խաղի նպատակն է երեխաների մեջ ամրապնդել ստացված գիտելիքները, մասնակցել հեքիաթին՝ ըստ իրենց ստացած «դերի»:
Կշռադատման փուլ	Թեմայի ամփոփում, դաստիարակի կողմից յուրաքանչյուր խմբին տրվում է հարցեր թեմայի ամբողջական ընկալման նպատակով:
Հարցեր	Ի՞նչ էր ցանել պապը, Ինչու՞ պապը շաղգամը հողից մենակ չկարողացավ հանել, ՈՒ՞մ օգնության կանչեց պապը, ՈՒ՞մ օգնության կանչեց տատը, ՈՒ՞մ օգնության կանչեց թոռնիկը, ՈՒ՞մ օգնության կանչեց շնիկը, ՈՒ՞մ օգնության կանչեց փիսիկը, Ովքե՞ր օգնեցին պապին, Ինչի՞ մասին էր հեքիաթը, Արդյո՞ք հերոսները ընկերասեր էին և միասնական, Իսկ եթե դու լինեիր նրանց փոխարեն, ինչպես կվարվեիր:

2.2. Հետազոտության ընթացք

Քանի որ ինքս աշխատում եմ Վայոց ձորի մարզ Արենի համայնք Աղավնաձոր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ-ում, ավագ խմբում՝ իրականացրել եմ հետազոտություն՝ երաժշտադիդակտիկ խաղերի ունեցած ազդեցության բացահայտման նպատակով: Հետազոտությանը մասնակցել է 28 սան:

Հետազոտության նպատակն է՝ երաժշտադիդակտիկ խաղերի միջոցով զարգացնել երեխաների ստեղծագործական կարողունակությունները, ինչպես նաև ձևավորել հետաքրքրություն երաժշտության նկատմամբ: Որպես երկրորդային նպատակ է սահմանվել երեխաների մեջ ձևավորել համախմբվածության, իրար օգնելու և սիրելու զգացմունքներ: Գործնական մասի իրականացման համար աշխատանքը բաժանել եմ մի քանի փուլերի:

Առաջին փուլ- այս փուլում իրականացրել եմ հետևյալ քայլերը.

- ✓ ուսումնասիրելով համապատասխան գրականություն և վերլուծելով երեխաների ունեցած գիտելիքները ընտրել եմ համապատասխան թեման՝ «Պապն ու շաղգամը»,
- ✓ այնուհետև ուսումնասիրել եմ թեմայի ուսուցման վերաբերյալ գրականություն,
- ✓ մշակել այն տեղեկատվությունը, որը պետք է փոխանցեմ սաներին,
- ✓ կազմել եմ պարապմունքի պլանը:

Երկրորդ փուլ- երկրորդ փուլում նախապատրաստել եմ երաժշտադիդակտիկ խաղերի անցկացման համար մեզ անհրաժեշտ նյութերը:

Պարապմունքն անցկացրել եմ ԽԻԿ համակարգով:

Խթանման փուլ: Երեխաներին բաժանում եմ 2 խմբի: Պատմում եմ «Պապն ու շաղգամը» հեքիաթը, որից հետո վերածում եմ երաժշտական բեմականացման: Ինքս կարևորելով երեխաների մոտ ստեղծագործական կարողությունների զարգացումը, կարծում եմ, որ հեքիաթների բեմականացումը և դերային խաղերի անցկացումը նպաստում է երեխայի համընդհանուր զարգացմանը:

Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որն իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում: Դերային խաղն ունի ուսուցանող, դաստիարակող և պրակտիկ մեծ հնարավորություններ: Այն խոսքային, խաղային և ուսուցման միաժամանակյա գործընթաց է: Խաղի ընթացքում երեխան գտնվում է խոսքային պատրաստականության մեջ, ուշադիր լսում է դաստիարակին և ընկերներին: Անընդհատ կրկնվող բառերը չեն հոգնեցնում ու ձանձրացնում նրան:

Դերային խաղը դաստիարակության և կրթության զարգացման միջոցն է, որը ձևավորում է երեխայի անհատականությունը: Օգտագործելով խոսքը՝ երեխան շփման մեջ է մտնում, համագործակցում է մյուսների հետ: Դերախաղը հարստացնում է երեխայի զգացմունքները և զգայարանները:

«Պապն ու շաղգամը» հեքիաթի բովանդակությունն ուշադիր ունկնդրելուց հետո երեխաների հետ սկսվեց ակտիվ քննարկում, հարց ու պատասխանների ամբողջ շարք: Քննարկումների ընթացքում երեխաներն արտահայտում էին իրենց զգացմունքները, տեսակետները, վերլուծում և քննարկում հերոսներին: Երեխաներն իրենք էլ չնկատեցին, թե ինչպես ներգրավվեցին հեքիաթի մեջ: Այնուհետև որոշեցինք բեմադրել հեքիաթը, իրենք ընտրեցին հերոսներին, կատարեցինք դերաբաշխում: Իրերը, դեկորները փորձեցինք պատրաստել միասին:

Չնայած աշխատանքը մի փոքր ծավալուն դարձավ, բայց դա ևս տվեց իր դրական արդյունքը: Այսպիսի աշխատանքի լուծում ենք մի շարք խնդիրներ՝ զարգանում են երեխայի ստեղծագործական երևակայությունը, ձեռագործությունը, մատների մոտորիկան: Երբ երեխան իր ձեռքով պատրաստում է մի իր և տեսնում է արդյունքը, նա շատ է ոգևորվում, նրա մեջ ձևավորվում է աշխատասիրությունը և հետևողականությունը, շատ խնամքով է վարվում իր պատրաստածին, երբեք այն չի կոտրի: Այս աշխատանքի շնորհիվ երեխան սովորում է գնահատել ընկերների կատարած աշխատանքը, համեմատել իր կատարած աշխատանքի հետ: Երեխաների մոտ զարգանում է միմյանց օգնելու, ընկերոջը ձեռք մեկնելու կարողությունը, ինչպես նաև խմբով աշխատելու կարողությունը:

Իմաստի ընկալման փուլ: Որպեսզի երեխաների մոտ կարողանամ ամրապնդել իմ կողմից տված գիտելիքները, երեխաներին հարցեր եմ ուղղում, օրինակ.

- Երեխաներ, Ձեզ դուր եկա՞վ հեքիաթը,
- Ի՞նչ էր ցանել պապը,
- Ինչու՞ պապը շաղգամը հողից մենակ չկարողացավ հանել,
- ՈՒ՞մ օգնության կանչեց պապը,
- Ովքե՞ր օգնեցին պապին:

Պարապմունքի ընթացքում ևս մեկ անգամ անդրադարձա հեքիաթի համապատասխան հատվածներին՝ ցուցադրելով և՛ պատկերազարդ նկարները, և՛ ձեռքիս տակ ունեցած հեքիաթի համար նախատեսված խաղալիքները:

Այնուհետև խաղում ենք լսողական ուշադրությունը զարգացնող խաղ՝ «Հավաքիր բերքը»: Խմբասենյակի տարբեր անկյուններում դնում ենք շաղգամները և Ես երգում եմ, բայց պարբերաբար դադարեցնում, նրանք արագ պիտի հավաքեն շաղգամները: Երեխայի խնդիրն է երաժշտության ընթացքում հավաքել շաղգամները, իսկ դադարի ժամանակ՝ քարանալ: Վերջում հաշվում ենք, թե որ խումբն է ամենաշատ շաղգամները հավաքել:

Կշռադատման փուլ: Քանի որ այս փուլի նպատակն է, որ սովորողը նոր ստացած տեղեկատվությունը կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով, նոր գիտելիքների միաձուլի ունեցածին, ուստի ուղղում են հետևյալ հարցերը.

- ✓ Ի՞նչ սովորեցրեց մեզ հեքիաթը,
- ✓ Արդյո՞ք հերոսները ընկերասեր էին և միասնական,
- ✓ Իսկ եթե դու լինեիր նրանց փոխարեն, ինչպես կվարվեիր,
- ✓ Կցանկանա՞ք ինքներդ նման շաղգամ աճեցնել:

Իմ կողմից անցկացված գործնական պարապմունքին ներկա էին մանկապարտեզի տնօրենը և մեթոդիստը: Տնօրենը և մեթոդիստը իրենց ուրախությունը հայտնեցին՝ տեսնելով երեխաների ակտիվությունը, նրանց կողմից

նշվեց, որ ամբողջ ընթացքը անցավ շատ հետաքրքիր: Մեթոդիստը նշեց, որ հաջողվել է հասնել իմ կողմից նախապես սահմանված նպատակներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով, ինչպես ցույց տվեցին իմ կողմից իրականացված գործնական հետազոտության արդյունքները, նախադպրոցական տարիքի երեխաները բնական, անկաշկանդ, միջավայրում ավելի վստահ են կարողանում կիրառել իրենց գիտելիքները, նրանք ձեռք են բերում մի շարք հմտություններ, զարգանում է երևակայությունը, կարողանում են ազատ արտահայտել իրենց մտքերը:

Նախադպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացման մեջ իր իրույն տեղն ունեն երաժշտադիդակտիկ խաղերը, քանի որ կարողանում են կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իրենց երևակայությամբ ստեղծած միտքը: Երաժշտադիդակտիկ խաղերը պետք է անցկացվեն դրական մթնոլորտում, այն պետք է զվարճալի և ուսանելի լինի: Ակտիվորեն զարգանում է երեխայի ստեղծականությունը և երևակայությունը:

«Պապն ու շաղգամը» հեքիաթի ուսուցման ընթացքում կիրառված մեթոդները հնարավորություն տվեցին երեխաների մոտ ձևավորվել ընկերասիրություն, բարություն, անկեղծություն, աշխատասիրություն: Զարգացավ նաև կոլեկտիվում աշխատելու ունակություններ և դրսևորվեցին համբերատարություն կոլեկտիվի անդամների նկատմամբ, դաստիարակվեց բարոյական և գեղագտական հատկանիշներ, ընդլայնվեց երեխաների ճանաչողական աշխարհընկալումը:

Կարծում եմ նմանատիպ աշխատանքների կիրառումը բավականին արդյունավետ է, ուստի խորհուրդ կտամ իմ բոլոր կոլեգաներին իրենց աշխատանքներում կիրառել այս տարբերակները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գալիկյան Ս. Ա., «Նախադպրոցական երաժշտական խաղերի և պարերի ձեռնարկ» Երևան 1961թ.,
2. Մարության Ս.Ա., Դալլաքյան Ա.Մ., «Նախադպրոցական մանկավարժություն», Երևան, 2008թ.,
3. Շահնազարյան Ա. Երաժշտությունը մանկապարտեզում,
4. Васильева Н.Н. Развивающие игры для дошкольников, Ярославль, 2001: